# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 սեպտեմբերի 2012թվականի N 386-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 1998ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 29-Ի «ՄԻ ՇԱՐՔ ԿՈՄՈՒՆԱԼ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 176 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան է դիմել Դիլիջան քաղաքի Օրջոնիկիձե փողոցի 67 շենքի թիվ 25 բնակարանի բնակիչ Գագիկ Գուլակյանը` հայտնելով, որ Դիլիջանի քաղաքապետի 1998 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ 176 որոշման մեջ սխալ է տեղի ունեցել. «Վահան Գուլակյանի», «Գրիգոր Գուլակյանի», «Գագիկ Գուլակյանի» և «Գայանե Գուլակյանի» փոխարեն գրվել է «Վահան Գուլաքյանի», «Գրիգոր Գուլաքյանի», «Գարիկ Գուլաքյանի» և «Գայանե Գուլաքյանի»: Քաղաքացին խնդրել է կատարել համապատասխան ուղղում:

Ուսումնասիրությունից պարզվել է, որ Դիլիջանի քաղաքապետի 1998 թվականի սեպտեմբերի 29-ի «Մի շարք կոմունալ բնակարանների սեփականաշնորհման մասին» թիվ 176 որոշման մեջ վերոհիշյալ անուն, ազգանունները թյուրիմացաբար սխալ է գրվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով`

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Դիլիջանի քաղաքապետի 1998 թվականի սեպտեմբերի 29-ի «Մի շարք կոմունալ բնակարանների սեփականաշնորհիման մասին» թիվ 176 որոշման 1-ին կետում կատարել փոփոխություն` «Վահան Գուլաքյանի», «Գրիգոր Գուլաքյանի», «Գարիկ Գուլաքյանի» և «Գայանե Գուլաքյանի» փոխարեն գրել «Վահան Գուլակյանի», «Գրիգոր Գուլակյանի», «Գագիկ Գուլակյանի» և «Գայանե Գուլակյանի»:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ` ԱՐՄԵՆ ՄԱԿԱՐՅԱՆ

2012 թ. սեպտեմբերի 06
ք.Դիլիջան